ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9 (2)

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
14.10.2024Թ.

Համայնքի ավագանու նիստին ներկա են ավագանու 22 անդամները, բացակայում են Արթուր Գալստյանը,Նորիկ Վարդանյանը, Գարիկ Ղամբարյանը, Տարոն Եփրեմյանը և Անահիտ Խեչոյանը:
Համայնքի ղեկավարի տեղակալի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Գ.Գրիգորյանը, խորհրդական Արսեն Խլղաթյանը, օգնական Երեմ Սահակյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Գ.Աֆյանը, Բ. Բալբաբյանը, Ս.Բալաբեկյանը, Ա.Զաքարյանը, գյուղերի վարչական ղեկավարները և «Մշակույթ » ՀՈԱԿ-ի տնօրեն Ա.Աբգարյանը:

Նախքան նիստը սկսվելը աշխատակազմի քարտուղարին փոխարինող քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բ.Բալբաբյանը հաղորդեց.
Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նիստը կվարի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը, քանի որ համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանը գտնվում է արձակուրդում:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը :

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի թիվ 2 հերթական նիստի հետևյալ օրակարգը.
   1) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին:
   2) Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող շինությունների զբաղեցրած հողատարածքները ուղղակի վաճառքով օտարելու մասին:

3) Չարենցավանի քաղաքային զբոսայգին Վլադիմիր Ավետիսյանի անվամբ անվանակոչելու մասին:
4) «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին:
5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 16-ի N 82-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին:
6) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
7) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցերի վերաբերյալ

Կողմ-22 **դեմ - 0** **ձեռնպահ -.0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, ***առաջարկում եմ.***

1. Ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը (կցվում է):
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ավագանու անդամ Նարեկ Բաբայանը հարցրեց՝ Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն Ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող կազմակերպությունների սպասարկման տարածքներում եկամտատեսակի գծով նախատեսված 4000.0 հազ. դրամի դիմաց հավաքագրված 2372.7 հազ դրամը Արզական գյուղի՞ց է արդյոք:

«Մշակույթ» ՀՈԱԿ-ի տնօրեն Արթուր Աբգարյանը, պատասխանեց որ ջուրը մատակարարվում է իրավաբանական անձանց՝ պանսիոնատներին, հանգստյան գոտիներին համայնքի ավագանու որոշմամբ 1խմ-ը՝ 150 ՀՀ դրամ սակագնով :

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-13 դեմ-7 ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող շինությունների զբաղեցրած հողատարածքները ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ 07-007-037-011, 07-007-0029-0027, 07-007-0053-0004 կադաստրային ծածկագրերով հողատարածքները չեն դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողատեսքերի դասին. ***առաջարկում եմ.***

1. Թույլատրել ուղղակի վաճառքով օտարելու ***Բաբկեն Վարդանյանին*** սեփականության իրավունքով պատկանող ք.Չարենցավան Քոչարի փողոց թիվ 23 հասցեում գտնվող խանութ սրահի զբաղեցրած 07-007-037-011 կադաստրային ծածկագրով՝ 83.0 քմ մակերեսով հողատարածքը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, կից ներկայացվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սեփականության վկայականի պատճենը):
2. Թույլատրել ուղղակի վաճառքով օտարելու ***Բելա Դարբինյանին*** սեփականության իրավունքով պատկանող ք.Չարենցավան 6-րդ թաղամաս 2-րդ փողոց թիվ 7/2 հասցեում գտնվող ավտոտնակի զբաղեցրած 07-007-0029-0027 կադաստրային ծածկագրով՝ 20.0 քմ մակերեսով հողատարածքը (նպատակային նշանակությունը՝ բնակելի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, կից ներկայացվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սեփականության վկայականի պատճենը):
3. Թույլատրել ուղղակի վաճառքով օտարելու ***Սերոբ Հակոբյանին*** սեփականության իրավունքով պատկանող ք.Չարենցավան Աբովյան փողոց թիվ 6 հասցեում գտնվող արտադրամասի զբաղեցրած 07-007-0053-0004 կադաստրային ծածկագրով՝ 1500 քմ մակերեսով հողատարածքը (նպատակային նշանակությունը՝ արտադրական, գործառնական նշանակությունը՝ արտադրական օբյեկտների սպասարկման, կից ներկայացվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սեփականության վկայականի պատճենը):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-22 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Չարենցավանի քաղաքային զբոսայգին Վլադիմիր Ավետիսյանի անվամբ անվանակոչելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի և 6-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, ***առաջարկում եմ.***

1.Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան քաղաքի Երիտասարդության փողոց 6 հասցեում գտնվող քաղաքային զբոսայգին /հիմք՝ 2005 թվականի հուլիսի 07-ին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 0249314/ անվանակոչել Վլադիմիր Ավետիսյանի անվամբ՝ «Վլադիմիր Ավետիսյանի անվան քաղաքային զբոսայգի»:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բենիկ Բալբաբյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 22 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 685-699-րդ հոդվածների և հաշվի առնելով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնօրենի դիմումը (մուտք՝ 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ 1827/04), ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան քաղաքի 5-րդ թաղամասի 9-րդ շենքին կից շինությունը («ՄԱԿՈՒ» ռեստորանի շենք, 532▯9 քմ մակերեսով տարածք, հիմք 2003 թվականի հունիսի 02-ին տրված սեփականության իրավունքի գրանցման վկայական N 804921) 5 (հինգ) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ համայնքահեն սոցիալ-առողջապահական ծառայություններ մատուցելու նպատակով:
2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 22 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 16-ի N 82-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38.1-րդ հոդվածով, ***առաջարկում եմ.***

1. Չեղյալ ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված միկրոռեգիոնալ փաստաթուղթը հաստատելու մասին» N 82-Ն որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 22 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Ա.Զաքարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի 23-րդ շենքի 28-րդ բնակարանի բնակիչ **Թադևոս Պեպանյանի** 2024 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 4516-16, Չարենցավան քաղաքի 1-ին թաղամասի 5-րդ շենքի 23-րդ բնակարանի բնակիչ **Գոհար Կոստանյանի** 2024 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 4515-16 և Չարենցավան քաղաքի 1ա թաղամասի 2-րդ շենքի 10-րդ բնակարանի բնակիչ **Խաչատուր Դեմիրճյանի** 2024 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 4871-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից»սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել **Թադևոս Պարգևի Պեպանյանին :**

2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել **Գոհար Յուրիկի Կոստանյանին :**

3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել **Խաչատուր Վարազդատի Դեմիրճյանին :**

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 22 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը

Լսեցին.

7. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով , ***առաջարկում եմ.***

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի օր և ժամը սահմանել 2024 թվականի նոյեմբերի 14-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 22 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաբայան Նարեկ
Բաղդասարյան Սահակ
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Մակինյան Վարդան
Մալխասյան Նորիկ
Մուքայելյան Վալերի
Շահգալդյան Հակոբ
Սահակյան Գառնիկ
Պալյան Գարիկ
Պապոյան Դավիթ
Պետրոսյան Ավետիք
Պողոսյան Մնացական
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ

Նիստն արձանագրեց Ա.Այվազյանը----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ**